Հումանիտար գիտությունների ֆակուլտետ

«Պատմություն» մասնագիտություն,

չորրորդ կուրս, Հրանտ Ղազումյան

«ՀԱՐԱՋԱՏ ԿՐԹՕՋԱ՛Խ ԻՄ, ԵՊՀ ԻՄ» ԹԵՄԱՅՈՎ ԷՍՍԵ

-Ի՞նչն ենք սիրում, այս քարե անշնուչ շե՞նքը:

- Չէ՛, մեր համալսարանը, որ մեր տունն է:

Ես ուսանող եմ. հարազատ կրթօջախիս արժանի զավակն ու նրա բարձր անվան պատասխանատուն: Բուհ, որ ոչ թե լոկ կրթօջախ է, այլ հայրենի տուն, ուր բոլորը անսպառ նվիրումով աշխատում են մեր ապագայի, երիտասարդության բարօրության համար: Եթե որևէ մեկն ինձ հարցնի, թե ինչպիսին է համալսարանը, որտեղ անց եմ կացնում իմ երիտասարդության լավագույն տարիները ես հպարտությամբ կասեմ. հայտնի,մրցունակ, գիտատեխնիկապես հագեցած և նույնիսկ՝ բարի,սիրելու չափ սիրելի, նվիրումի արժան:

Տավուշյան գողտրիկ այս անկյունում տեղակայված մեր ընդհանուր տունը զբաղվում է ոչ միայն կրթական, այլև դաստիարակչական խնդիրներով, հասարակություն ճանապարհում կշռադատված ու առողջ դատողության տեր անհատներ:

Այստեղ ոչ միայն գիտելիքներ ենք ձեռք բերում, այլև ձևավորվում ենք որպես զինվոր, որպես սահմանամերձ գոտու սահմանապահ…

Գիտեմ՝ կան նաև այնպիսի ուսանողներ, ովքեր համալսարանը սիրում են իրենց ուսանողական ստուգման գրքույկի գնահատականներով: Այդ գնահատականները ոմանք հանիրավի ֆետիշացնում են: Պետք է առավել խելացիորեն մտածել կյանքի՛ ստուգման գրքույկի մասին, որովհետև ամեն օր, ամեն պահի առնչվելով արտաքին աշխարհի հետ՝ քննություն ենք հանձնում մեզ շրջապատող մարդկանց: Բավական է մի սխալ պահվածք կամ ավելորդ, ոչ տեղին արտահայտություն և կյանքում

քննություն չենք բռնի: Այդպիսին է կյանքի օրենքը: Կարծես մենք ենք որոշում մեր՝ կյանք մտնողներիս սպասվող քննության կարգը, կանոնը, ձևը: Ոմանց հարցաշար ենք տալիս, նույնիսկ տոմս փոխելու հնարավորություն, ոմանց նկատմամբ շատ խիստ ենք լինում, ոմանք էլ այնքան արժանի են, որ առանց քննության անց կացնելու՝ գերազանց են ստանում:

Սիրելի՛ ուսանող, հիշի՛ր, որ կյանք է տալիս ստուգման գրքույկ, որի գնահատականները պիտի վերաբերեն մեր մարդկային կերպարին, մեր գիտելիքներին, մեր բարեկրթությանը, պատրաստակամությանը: Սիրի՛ր մեր կրթօջախը,, որովհետև ամեն ինչ սիրուց է սկսվում, նաև այդ սիրուց:

Կարևորը մարդ լինելն է, ու դիպլոմի գույնն էլ կարևոր չէ: Այդ գույնը որոշում է հասարակությունը, այն միջավայրը որրտեղ դու սկսելու ես քո գործունեությունը: Սովորիր քեզ համար, լսի՛ր արդեն 4-ամյա ճանապարհ անցած, գրեթե շրջանավարտի մտքերը՝ ուղղված սիրելի կրթօջախին:

Արդեն մի քանի ամսից մենք կհամալրենք քո շրջանավարտների շարքերը, սիրելի՛ կրթօջախ: Արագ անցած չորս տարի: Գուցե չկարողանամ վերջին օերերիս զբաղվածությանը զուգահեռ զրուցել քեզ հետ, դրա համար հենց հիմա եմ ասում ինձ համար խիստ կարևոր այս խոսքերը: Սիրելի՛ կրթօջախ, շնորհակալ եմ քեզնից: Ես ու սերնդակիցներս կհեռանանք երախտագիտության բուռն զգացումով, որը մեզ մեծ կյանք կուղեկցի հավատի ու վստահության երաշխիքով: